ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2012թ. **N ----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Դ.Դեմիրճյան փողոցի փակուղին վերանվանել որպես Գրիգոր Հարությունյան։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման համար հիմք է հանդիսանում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանի 18.01.2012թ. h 50/250 գրությունը։

2010 թվականին լրացել է քաղաքական, հասարակական գործիչ Գրիգոր Հարությունյանի /Գրիգոր Արուտինով/ ծննդյան 110-ամյակը։

Գ. Հարությունյանը ղեկավարել է Խորհրդային Հայաստանը հանրապետության համար ամենաբարդ ժամանակաշրջանում՝ 1937-1954թթ.։

Լինելով հանրապետության Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, Գրիգոր Հարությունյանն իրագործել է մի շարք ազգանպաստ նախագծեր։

Նա կազմակերպել է արևմտահայերի հայրենադարձությունը, օրինականացրել է Հայ Առաքելական եկեղեցու գործունեությունը, ստեղծել Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան, կառուցել Մատենադարանը և այլն։

Գրիգոր Հարությունյանի նախաձեռնությամբ բարձրացվել է Արևմտյան Հայաստանի և Նախիջևանի զավթված հողերի վերադարձման հարցը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գրիգոր Հարությունյանի անվամբ փողոց վերանվանելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրիգոր Հարությունյանի անվամբ փողոց վերանվանելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ եվ/կամ/ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ